ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի և 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 395-Ա որոշումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արզնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Մնուշ Թադևոսյանին*** տրամադրել 2019 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած մասը՝ տասը աշխատանքային օր, 2019 թվականի մայիսի 13-ից մինչև մայիսի 24-ը ներառյալ:

2. ***Մնուշ Թադևոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արզնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բուժքույր ***Թերեզա Հակոբյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արզնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բուժքույր ***Թերեզա Հակոբյանին*** և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Միքայել Միքայելյանին*** *(համաձայնությամբ)* ապահովել «Արզնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Յանա Պետրոսյան (համաձայնությամբ))* կողմից:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թվականի մայիսի 10
ք. Հրազդան
N 57-Ա